ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՍԱՀՍԿՄԱՆ, ՑԱՆՑԱՅԻՆ ԵՎ ԿՈՆՖԵՐԱՆՍ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/9

ք. Մասիս «17» դեկտեմբերի 2024թ.

Մասիս համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Դ. Համբարձումյանի, որը գործում է համայնքի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ջի-Էս-Սի» ՍՊԸ-ն, ի դեմս Հայկ Ավետիսյանի, որը գործում է օրենսդրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **տեսահսկման, ցանցային և կոնֆերանս համակարգերի սպասարկման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայությունների ընդհանուր գինը կազմում է **8 591 040 (ութ միլիոն հինգ հարյուր իննսունմեկ հազար քառասուն) ՀՀ դրամ,** ներառյալ՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս

պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Մասիսի համայնքապետարան	**<<Ջի-Էս-Սի>> ՍՊԸ**
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4	**ք. Երևան, Աճեմյան 18, 44շին**
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	**<<Ինեկոբանկ>> ՓԲԸ**
ՀՎՀՀ 04240324	**ՀՎՀՀ 02258906**
	Տնօրեն՝ Հ.Ավետիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 17 » դեկտեմբերի 2023թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/9 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	50321600	Տեսահսկման համակարգի սպասարկման ծառայություններ Կցվում է	դրամ	4 795 200	1	Մասիս համայնք	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 31.12.2025թ. ներառյալ
2	72711100	Ցանցային և կոնֆերանս համակարգերի սպասարկման ծառայություններ Կցվում է	դրամ	3 795 840	1	ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 31.12.2025թ. ներառյալ

Չափաբաժին 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

տեսահսկման համակարգի սպասարկման ծառայությունների

Անհրաժեշտ է կատարել Մասիս խոշորացված համայնքի՝ Մասիս քաղաքի և 26 (Այնթապ, Ազատաշեն, Արբաթ, Արգավանդ, Արևաբույր, Գեղանիստ, Գետափնյա, Դաշտավան, Դարակերտ, Դարբնիկ, Զորակ, Խաչփար, Հայանիստ, Հովտաշատ, Ղուկասավան, Մարմարաշեն, Նիզամի, Նոր Խարբերդ, Նոր Կյուրին, Նորաբաց, Նորամարգ, Ջրահովիտ, Ռանչպար, Սայաթ-Նովա, Սիս և Սիփանիկ) վարչական շրջաններում (այսուհետ՝ Համայնք) տաղադրված տեսահսկման ամբողջ համակարգի սպասարկում:

Սպասարկող ընկերությունը պետք է ապահովի Համայնքին պատկանող տեսանկարահման և պետհամարանիշների գրամցման համակարգերի անխափան աշխատանքը, սպասարկումը իր մեջ ներառում է նվազագույնը 137 թվային տեսախցիկներ, որոնցից 32 հատը Մասիսի համայնքապետարանի վարչական շենքում, մնացած տեսախցիկները Համայնքի վարչական շրջաններում: Սպասարկումը ներառում է նաև ցանցային տեսաձայնագրիչները՝ թվով 5 հատ, ցանցային բաժանարարները՝ թվով 30 հատ, անխափան սնքուցման սարքերը՝ թվով 2 հատ:

Սպասարկող ընկերությունը պետք է իրականացնի շուրջ 6կմ օպիտակմանրաթելային մալուխների ստուգում, վերականգնում, ինչպես նաև 2 կմ օպիտակմանրաթելային մալուխի փոխարինում, անհրաժեշտության դեպքում օպտիկամանրաթելային մալուխների հանգույցների ստուգում և զոդում թվով 40 կետ, օպտիկամանրաթելային մալուխնրով փոխանցվող ազդանշանների ստուգում, կարգաբերում, Համայնքում գործող և Համայնքին պատկանող թվով 8 հատ ալեհավաքների անխափան աշխատանք, որոնք տեղադրված են Համայնքի ամբողջ տարածքում և որոնցով իրականացնում են տեսապատկերի փոխանցումը տեսախցիկներից դեպի Մասիսի համայքապետարանի վարչական շենք, կարգաբերում, կոնֆիգուրացում, շուրջ 5կմ տեսահսկման համակարգի մալուխներով փոխանցվող ազդանշանների ստուգում, կարգաբերում: Սպասարկող ընկերությունը պետք է ապահովի Համայնքում տեղադրված բոլոր տեսախցիկների անխափան կապը Մասիսի համայնքապետարանում տեղադրված տեսաձայնագրիչների հետ:

Սպասարկող պետք է իրականացնի HikCentral Professional bace 125 լիցենզիոն ծրագրային փաթեթի սպասարկում նվազագույնը 137 տեսախցիկների համար, ինչպես նաև HikCentral Professional ANPR ծրագրի սպասարկում: Պետք է ունենա սերտիֆիկացված մասնագետներ, որոնք ունեն HCSA-AAI և HCSA-VMS սերտիֆիկացում՝ սպասարկումը պատշաճ մակարդակով կազմակերպելու նպատակով:

Սպասարկող ընկերությունը պետք է ունենա համապատասխան որակավորում՝ փոխադարմիջոցների պետհամարանիշների ծրարգրերի հետ աշխատանքների համար, ըստ անհարժեշտության՝ Պատվիրատուի պահանջով, պետք է կատարի պետհամարանիշների և տրանսպորտային միջոցների գրանցման ֆիլտրում, փնտրում և այլ անհրաժեշտ գործառույթներ:

Սպասարկող ընկերությունը պետք է կատարի ամսական առնվազն մեկ այց ամբողջ համակարգի անխափան աշխատանքը ստուգելու և ապահովելու նպատակով: Սպասարկողը պարտավոր է ապահովելու ծրագրային թարմացումների տրամադրումն ու տեղադրումը: Անսարքության դեպքում պատվիրատուի պահանջով սպասարկող ընկերությունը պետք է վերացնի առաջացած թերությունները անսարքության վերաբերյալ տեղեկություն ստանալուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ քան 2 օրացուցային օրվա ընթացքում, հակառակ պարագայում սպասարկողը պետք է դիմի Պատվիրատուին հավելյալ ժամանակ տրամադրելու համար՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ:

Սպասարկող ընկերությունը պետք է ուենա առնվազն 5 տարվա մասնագիտական փորձ տվյան ոլորտում, որի վերաբերյալ պետք է ներկայացնի անհրաժեշտ փաստաթղթերը պայմանագրի կատարման փուլում: Ընդ որում, Համայնքում արդեն իսկ տեղադրված և շահագործվում են Hikvision ապրանքանիշի սարք-սարքավորումներ:

Չափաբաժին 2

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ցանցային և կոնֆերանս համակարգերի սպասարկման ծառայություններ

Մասիսի համայնքապետարանանին անհրաժեշտ է գործող ցանցային համակարգի, թվային հեռախոսային համակարգի, աուդիո համակարգի, թվային կոնֆերանս համակարգի և թվային քվիարկման համակարգի սպասարկման ծառայություններ, որի շրջանակում սպասարկող ընկերությունը պետք է ապահովի ցանցում արդեն առկա և գործող սերվերների, կոմուտատորների, երթուղիչների, տվյալների պահստավորման, սերվերների, անխափան սնուցման սարքերի, ցանցային հեռախոսների, աուդիո սարքավորումների, կոնֆերանս սարքավորումների անխափան և անընդհատ աշխատանքը:

Սպասարկման մեջ մտնող ապրանքերի մասը իր մեջ ներառում, բայց չի սահմանակվում հետևյալ ապրանքներով.

- Սերվերներ – 1 հատ
- Կոմուտատորներ - 11 հատ
- Երթուղիչներ – 8 հատ
- Տվյալների պահեստավորման սերվերներ- 1 հատ
- Անխափան սնուցման սարքեր 2 – հատ
- IP հեռախոսային կայան – 1 հատ
- IP հեռախոսներ – 47 հատ
- Ցանցային մալուխ – 13800 մ
- Օպտիկամանրաթելային մալուխ – 200 մ
- Օպտիկամանրաթելային մալուխի հանգույցներ – 16 կետ
- Օպտիկամանրաթելային փոխակերպչներ – 12 հատ
- Ցանցային վարդակներ – 200 հատ
- Ամբողջական թվային կոնֆերանս համակարգի վերահսկիչ – 1 հատ
- Թվային 4.3 դույմ սենսորային էկրանով կոնֆերանսի վահանակ – 33 հատ
- Թվային 7 դյույմ սենսորային էկրանով կոնֆերանսի գլխավոր վահանակ – 1 հատ
- Թվային հետադարձ կապի և քվիարկության համակարգի վահանակ – 1 հատ
- 12 ալիքների միկշեր, 3 շղթա EQ, 24-բիթանոց DSP-ով – 1 հատ
- Պրոֆեսիոնալ 4 ալիք թվային աուդիո պրոցեսոր, 4 մուտք – 1 հատ
- Չորս ալիք Class-D ուժեղացուցիչ, 4×500W, 100V – 1 հատ
- Բարձրակարգ պատին տեղադրված բարձրախոս RMS20W /Max40W– 8 հատ
- Օպտիկական SFP մոդուլ – 12 հատ
- Անլար WIFi Երթուղիչներ – 8 հատ
- 6 գոտիանի թվային ձայնային ուժեղարար/ աուդիոմիքշեր – 1 հատ
- Բարձախոս պատին ամրացնելու համար, ուղանկյունաձև - 6 հատ
- Բարձախոս առաստաղին ամրանելու համար, շրջանաձև - 2 հատ
- Ընդունիչ – 1 հատ
- /Wire-Less/ եղանակով աշխատող խոսափողերի հավաքածու – 1 հատ
- Վեբ – տեսախցիկ – 1 հատ

Ընդ որում, ներկայացված քանակները նվազագույնն են, որոնք կարող են փոփոխվել՝ ավելանալ: (պատվիրատուի պահանջով կարող է լինել Մասիսի համայնքապետարանին պատկանող ցանցային այլ սարքվորումներ ևս):

Սպասարկող ընկերությունը պետք է ապահովի սերվերների վրա տեղադրված օպերացիոն համակարգերի (Linux, Windows, Vmware, Xeon և այլն) անխափան աշխատանքը, կատարել կարգաբերումներ պարբերական թարմացումներ (արտադրողի կողմից նշված ժամկետներում), անհրաժեշտության դեպքում ավելացնել նոր վիրտուալ սերվերներ, ապահովել օգտվողների կենտրոնացված համակարգ Windows Active directory server-ի անխափան և անվտանգ աշխատանքը, կատարել կարգաբերումներ և թարմացումներ, ավելացնել և կասեցնել օգտվողներ, ինչպես նաև օգտվողների համակարգիչներում կատարել համապատասխան կարգաբերումներ, ստեղծել պահուստային active directory սերվեր ըստ անհրաժեշտության, ստեղծել ֆայլային սերվեր (file server), կատարել կարգաբերումներ և ապահովել համապատասխան թույլատվություններ ըստ օգտվողների և ստորաբաժանումների, կատարել կոմուտատորների կարգաբերումներ, «vlan» սեգմենտավորումներ ըստ սերվերների, վիրտուալ մեքենաների և ծառայությունների, անհրաժեշտության դեպքում կատարել օպերացիոն համակարգի պարբերական թարմացում, ըստ անհրաժեշտության ներդնել և վարել տվյալների պահուստավորման համակարգ, որը թույլ կտա բոլոր սերվերային համակարգերի կրկնօրինակների անվտանգ պահպանումը:

Սպասարկող ընկերությունը պետք է իրականացնի կոմուտատորների, անլար ցանցային սարքերի (wifi) անընդհատ սպասարկում, ապահովելով սարքերի անխափան աշխատանքը, ապահովելով ներքին ցանցի անխափան և անվտանգ աշխատանքը, կատարել կարգաբերումներ թարմացումներ , սեգմենտավորում ըստ «VLAN»-ների, «STP» տեխնոլոգիայի կիրառում, անհրաժեշտության դեպքում «port security»-ի կիրառում:

Ըստ անհրաժեշտության համայնքապետարանի սենյակներում և հարկերում անցկացնել և կատարել մոնտաժում նոր մալուխների (անպայման պլաստմասե մալուխատարերով), հոսանքի բաշխիչների, ցանցային վարդակների, անլար կապուղու սարքերի:

Սպասարկող ընկերությունը պետք է մշակի և ներդնի մոնիթորինգ համակարգ, որը ռեալ ժամանակում մշտադիտարկի սերվերային համակարգերը, ցանցային սարքավորումները և ինտերնետը: Սպասարկող ընկերությունը պետք է ստեղծի սերվերային համակարգերի և ներքին ցանցի աշխատանքային գծագրեր և հետևի դրանց արդիականությունը:

Պետք է նախագծվի և ներդրվի հայտերի կառավարման համակարգ ըստ պատվիրատուի պահանջի, որի միջոցով պետք է կազնակերպվի SS խնդիրների հայտնաբերման, գրանցման պրոցեսը:

SS աշխատակիցների աշխատանքային ժամերը պետք է համընկնեն պատվիրատուի աշխատանքային գրաֆիկին և համաձայնեցված լինեն պատվիրատուի հետ:

Սպասարկող ընկերությունը պետք է իրականացնի օպտիկամանրաթելային մալուխների ստուգում, օպտիկամանրաթելային մալուխների հանգույցների ստուգում, օպտիկամանրաթելային փոխակերպիչների ստուգում: Օպտիկամանրաթելային մալուխների վնասված լինելու դեպքում, զոդում, եռակցում:

Սպասարկող ընկերությունը պետք է կատարի ամսական առնվազն մեկ այց ամբողջ համակարգի անխափան աշխատանքը ստուգելու և ապահովելու նպատակով: Անսարքության դեպքում պատվիրատուի պահանջով սպասարկող ընկերությունը պետք է վերացնի առաջացած թերությունները անսարքության վերաբերյալ տեղեկություն ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա նթացքում:

Սպասարկող ընկերությունը պետք է ունենա առնվազն 5 տարվա մասնագիտական փորձ տվյալ ոլորտում: Ընդ որում, Համայնքում արդեն իսկ տեղադրված և շահագործվում են Ruijie և Hikvision սարք-սարքավորումներ:

Անհրաժեշտ է կատարել Մասիսի համայնքապետարանում գործող կոնֆերանս և քվիարկության ամբողջ համակարգի սպասարկում:

Սպասարկող ընկերությունը պետք է ապահովի Մասիսի համայնքապետարանում գործող կենֆերանս և քվիարկության համակարգի սպասարկումը, որը իր մեջ ներառում է կոնֆերանս համակարգի ղեկավարման սարքի անխափանելիության ապահովում, կոնֆիգուրացում, կոնֆերանս համակարգի խոսափողների վերականգնում, անխափանելիության ապահովում, ձայնի որակի ապահովում, բարձրախոսների ձայնի որակի ստուգում, կարգավորում, որակի պահպանում, կոնֆիգուրացում, աուդիո մալուխների ստուգում, վերականգնում, ամբողջ համակարգի անխափան աշխատանքի ապահովում:

Քվիարկության համակարգի սպասարկումը իր մեջ ներառում է համակարգի կոնֆիգուրացում վերականգնում, անխափանելիության ապահովում, քվիրկության արդյունքերի վերծանում:

Սպասարկող ընկերությունը պետք է իր միջոցներով տեղադրի և կարգաբերի քվիրկության արդյունքերը գրանցող, վեՃծանող լիցենզիոն ծրագրային ապահովումը:

Սպասարկող ընկերությունը պետք է ունենա նմանատիպ համակրգի տեղադրման և սպասարկման փորձ:

Սպասարկող ընկերությունը պետք է իրականացնի կոֆերանս համակարգի աշխատանքի անընդհատության ապահովում, ըստ պահանջի կատարի խորհրդատվություն համայնքի համապատասխան աշխատակցին, կատարի ծրագրային թարմացումներ, ըստ պատվիրատուի պահանջի կատարի ընդհանուր համակարգի մոնիթորինգ, խնդիրների հայտնաբերում և խնդիրների անմիջապես լուծում:

Սպասարկող ընկերությունը պետք է կատարի ամսական առնվազն երեք այց ամբողջ համակարգի անխափան աշխատանքը ստուգելու և ապահովելու նպատակով: Անսարքության դեպքում պատվիրատուի պահանջով սպասարկող ընկերությունը պետք է վերացնի առաջացած թերությունները անսարքության վերաբերյալ տեղեկություն ստանալուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ, քան 1 աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ պարագայում սպասարկողը պետք է դիմի Պատվիրատուին հավելյալ ժամանակ տրամադրելու համար՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ:

Սպասարկող ընկերությունը պետք է ունենա համապատասխան մասնագետներ Մասիս համայնքում արդեն իսկ տեղադրված և շահագործվող ITC ապրանքանիշի սարք-սարքավորումների հետ աշխատանքներ կատարելու համար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Մասիսի համայնքապետարան	**<<Ջի-Էս-Սի>> ՍՊԸ**
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4	**ք. Երևան, Աճեմյան 18, 44շին**
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	**<<Ինեկոբանկ>> ՓԲԸ**
ՀՎՀՀ 04240324	**ՀՎՀՀ 02258906**
	Տնօրեն՝ Հ.Ավետիսյան
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
« 17 » դեկտեմբերի 2024թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/9 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/Հ	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 202 թ. ըստ ամիսների և առկա միջոցների												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	Տեսահսկման համակարգերի սպասարկման ծառայություններ Հ/Հ 900 432 131 044	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%
2	Ցանցային և կոնֆերանս համակարգերի սպասարկման ծառայություններ Հ/Հ 900 432 131 036	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մասիսի համայնքապետարան
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Ջի-Էս-Սի>> ՍՊԸ
ք. Երևան, Աճեմյան 18, 44շին
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 02258906
Տնօրեն՝ Հ.Ավետիսյան

/ստորագրություն/
Կ.Տ